

չափ հագուագիւտ բան մը եղած կ'ըլլայ. իսկ եթէ երկրորդ շրջանին դարձեալ թաղական ընտրուի՝ անպատճառ կարտաքսուի: Հոս ամեն թաղէն աւելի շարժում կայ: Ասկէ երկուօրերք ամիս առաջ քսան - երեսուն երիտասարդներ թաղական խորհրդարանը մտան եւ թաղական խորհրդին թեւէն բռնելով դուրս հրամցուցին զայն:

—Ինչո՞ւ:

—Վասնզի դպրոցն աղէկ չէին նայեր: Պատրիարքարանն ալ առժամանակեայ թաղական մը տուաւ մեզի:

—Նոր թաղականն ե՞րբ պիտի ընտրուի:

—Երբ որ հին թաղականը դուրս հրամցնող երիտասարդներն *մեղայ* ըսեն:

—Եթէ չըսէ՞ն:

—Քուէարկութեան չպիտի մասնակցին:

—Վարժարաններն ի՞նչպէս են:

—Երկու տարի է, որ շտկելու կաշխատին. ընդհանուր կարծիքն այն է, թէ տաս տարիէն կարելի պիտի ըլլայ զանոնք բարեկարգելը: Հոս ծնած է Մինէճի Անդրանիկն, որ ժամանակաւ շատ աշխատած է այդ վարժարաններուն համար. անգղիերէն խօսող հայն առաջին անգամ Սամաթիայէն ելած է. ջրհանկիրներու մէջ ալ այսօր անգղիերէն կարդացողներ կ'գտնուին:

—Հիմա ո՞վ կը հսկէ դպրոցներու վրայ:

—Այսինքն ո՞վ չհսկեր, ըսել կ'ուզես:

—Հիմա ո՞վ է, որ չհսկեր դպրոցներուն վրայ:

—Երբեմն հոգաբարձուներու եւ հոգաբարձուհիներու մէջ կարծիքներու անհամաձայնութիւն ծագած ըլլալով՝ հիմա որոշուած է, որ ամուսնացած թաղականներն իրենց կիներովը չհսկեն վարժարաններու վրայ: Հիմակուան թաղականներն այնչափ օրինապահ են, որ ընդհանուր Ընդհանուր Դատախազի դրութիւնն կառավարութենէ ընդունուելէն ի վեր՝ թաղական խորհրդոյ մէջ ալ ամեն օր հարիւրէն աւելի մասնաւոր դատախազներ կը գտնուին:

—Հայկականէն զատ ընկերութիւն չկա՞յ հոս:

—Շատ մը ընկերութիւններ կային ատենօք, բայց հիմայ չկայ: Պարգասիրաց ընկերութիւն մը կայ միայն, որ կիներուն պարզ հագնիլ պիտի սորվեցնէ. կարծեմ ասոր ալ անունը կայ միայն:

—Եկեղեցասիրութիւն կա՞յ հոս: